

**2011 թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1801-Ն որոշմամբ հաստատված
հիվանդություններով չտառապելու մասին տեղեկանքներ տրամադրվում են
հետևյալ բուժհաստատությունների կողմից.**

Հոգեկան հիվանդությունների վերաբերյալ՝

- Երևան քաղաքում՝ ՀՀ ԱՆ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ Ավանի կլինիկա:
- ՀՀ մարզերում
Շիրակի մարզում «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ: Լոռու մարզում «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՓԲԸ: Սյունիքի մարզում «Սյունիքի մարզային նյարդահոգեբանական դիսպանսեր» ՓԲԸ:
Սևան քաղաքում ՀՀ ԱՆ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ:
Հանրապետության մյուս մարզերում և տարածաշրջաններում համապատասխան տեղեկանքները տրամադրվում են ըստ բնակավայրի՝ տարածքային պոլիկլինիկաների կողմից:

Նարկոլոգիական հիվանդությունների վերաբերյալ՝

- Երևան քաղաքում՝ ՀՀ ԱՆ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ նարկոլոգիական կլինիկա:
- ՀՀ մարզերում համապատասխան տեղեկանքները տրամադրվում են ըստ բնակավայրի՝ տարածքային պոլիկլինիկաների կողմից:

Տուբերկուլոզի վերաբերյալ ՀՀ ողջ տարածքում համապատասխան տեղեկանքները տրամադրվում են ըստ բնակավայրի՝ տարածքային պոլիկլինիկաների կողմից:
Տեղեկանքների գործողության միջին ժամկետը մեկ տարի է: